135 տեսաք հազար եւ աւելի թօնիրս եւ օճախ վասն ուխտաւորաց, որ անդ խորու եւ պիրեան կ'եփեն, զի ամենայն տիեզերաց զան առնա ի հեռու եւ օտար աշխարհաց՝ Ուռումէլու եւ Լէհաց Բռ—Գռ հոգի կու լինի. եւ ուխտն
140 է Վարդավառին օրն:

Եւ եկեղեցոյ եաւրքն տեսաք մեծամեծ վիմաց խաչեր կանգնեցուցած եւ ազգի ազգի արվեստ եւ կապք ի վրայ հանած: Եւ սակաւ մի այլ վայր էր վանք մի այլ, Զորէհանդիստ
145 կոչեն, բայց աւեր է. եւ ասին թէ Ջորիքն որ բարձեալ էին զսուրբ մարմինն՝ անդ կանկ առին եւ ոչ կարացին շարժիլ ի տեղոյն. եւ իրրեւ տարակուսեցան՝ եկն հրեշտակ Տեառն եւ ասէ. Այստ հաճեցաւ Տէր բնակիլ սրբոց.
150 զայն տեղն եկեղեցի չինած էր:

Եւ յաջ կողմն անցեալ եկեղեցուն՝ տեսաք զԱՀջուն գերեզմանն, բայց երկու կտոր եղած էր. եւ ասին. Ով քարիս վրայ պառկի, մէջքն չի ցաւի: Բայց վասն զոգ Քրդոց՝ բարձր
155 պարիսպ քաշած էր:

Եւ սուրբ Կարապետն մէջ մէջի է եւ լեռնային եւ յոյժ դեղեցիկ տեղ. եւ ի ճանապարհին սաֆի անթառամ ծաղիկ է եւ եապանի սմոլօլ եւ այլ հոտով ծաղկնի: Իսկ մորին ա-
160 մէնն եէմիչ է՝ խնծոր, տանձ եւ սալօռ, ընկուզն չատ: Եւ ազգ մի պտուղ կու լինի՝ կարմիր սպիտակ գունով, փոքր եւ կլոր քան գկերաս՝ մէյմիոչ համ ունի, ալօճ կոչեն: Եւ

154 քրթոց: — 160 սառուլ ի վրայ օ: — 162 կլոր: